Հասցեատեր՝

«Նոա ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ noahfcarm@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.11.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՊԼ-063
Խախտում՝	1. «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանի (53887) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 2. «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանի (53887)՝ առանց հարգելի պատճառի ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստին չներկայանալը (Հավելված 1 Ա, 76-րդ կետ) 3. «Նոա ՖԱ» ՀԿ մարզիչ Պեդրու Միգել Դա Կոստա Իլիասի (53915) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը, մրցակից թիմի ներկայացուցիչների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 9, 1.2 և 1.4 ենթակետեր)
Առաջնություն՝	Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Արարատ-Արմենիա» - «Նոա», 28.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանին (53887) զրկել ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից 2 (երկու) խաղով:

Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցն ամբողջությամբ՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Նոա» թիմի գլխավոր մարզիչ Ռուի Թոմաս Ֆաուշտինյու Պինտու դա Մոտանի (53887) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի դեկեմբերի 19-ը ներառյալ:

2. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 37-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

3. «Նոա ՖԱ» ՀԿ մարզիչ Պեդրու Միգել Դա Կոստա Իլիասին (53915) զրկել ծառայողական պարտականություններն իրականցնելու իրավունքից 3 (երեք) խաղով:

   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Նոա ՖԱ» ՀԿ մարզիչ Պեդրու Միգել Դա Կոստա Իլիասի (53915) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ:

   Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: